ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 11** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչների մասին

Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն անցկացնելու մասին արձանագրության 4-րդ կետի 2-րդ ենթակետի իրականացման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի հավելված թիվ 14) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց՝**

1. Հաստատել կից ներկայացված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

2. Առաջարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարություններին մակրոտնտեսական քաղաքականությունն անցկացնելիս հաշվի առնել սույն Որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ կատարել

մակրոտնտեսական քաղաքականության ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից իրականացվող միջոցների վերլուծություն՝ սույն Որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչներին դրանց համապատասխանելու մասով:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի
2015 թվականի մայիսի 8-ի թիվ 11
որոշմամբ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների 2015-2016 թվականների մակրոտնտեսական քաղաքականության

Ընթացիկ տնտեսական իրավիճակը Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, Միություն), որը ստեղծվել է անբարենպաստ արտաքին տնտեսական կոնյուկտուրայի ազդեցության եւ համաշխարհային հումքային շուկաներում դրության անկայունության, ինչպես նաեւ այդ անդամ պետությունների տնտեսություններում կուտակված անհավասարակշռությունների արդյունքում, բնորոշվում է հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների էական վատթարացմամբ եւ տնտեսական ակտիվության դանդաղեցմամբ:

Նավթի գների կտրուկ իջեցումը (2014 թվականի սեպտեմբերից մինչեւ 2015 թվականի հունվարը «Brent» ապրանքանիշի նավթի միջին ամսական գինը նվազել էր 51,4 տոկոսով) եւ հումքային ապրանքների համաշխարհային պահանջարկի կրճատումը բացասական ազդեցություն գործեցին անդամ պետությունների վճարային հաշվեկշիռների վիճակի վրա, նպաստեցին փոխադարձ առեւտրի եւ երրորդ երկրների հետ առեւտրի ցուցանիշների վատթարացմանը, ճնշում գործադրեցին միջազգային պահուստային ակտիվների եւ ազգային արժույթների փոխարժեքների վրա եւ ընդհանուր առմամբ բացասաբար ազդեցին անդամ պետությունների տնտեսությունների

վիճակի վրա:

Միության համախառն ներքին արդյունքի աճի տեմպերը 2014 թվականին նվազեցին մինչեւ 1 տոկոս, ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում դրանք կազմել են 3,4 տոկոս, Բելառուսի Հանրապետությունում՝ 1,6 տոկոս, Ղազախստանի Հանրապետությունում՝ 4,3 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում՝ 0,6 տոկոս:

Ընդհանուր առմամբ Միությունում 2014 թվականին գնաճն աճել է մինչեւ 11,1 տոկոս, ընդ որում, Հայաստանի Հանրապետությունում այն կազմել է 4,6 տոկոս, Բելառուսի Հանրապետությունում՝ 16,2 տոկոս, Ղազախստանի Հանրապետությունում՝ 7,4 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում՝ 11,4 տոկոս:

2014 թվականի ընթացքում եւ 2015 թվականի սկզբին դիտվում էր ազգային արժույթների փոխարժեքների՝ համաշխարհային առաջատար արժույթների նկատմամբ նվազման միտում, ինչը հատկապես ուժգնացավ 2014 թվականի վերջում եւ 2015 թվականի սկզբին: Արդյունքում ռուսական ռուբլու միջին ամսական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2014թ. հունվարից մինչեւ 2015թ. հունվարն ընկած ժամանակահատվածում նվազել է 84,4 տոկոսով (33,46–ից մինչեւ 61,7 ռուբլի 1 ԱՄՆ դոլարի դիմաց), բելառուսական ռուբլին այդ նույն ժամանակահատվածում կորցրել է 50,3 տոկոս (գլխավորապես 2015 թվականի հունվարի ընթացքում փուլային արժեզրկման արդյունքում): Հայկական դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2015թ. հունվարին 2014 թվականի համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 16,8 տոկոսով, իսկ ղազախական տենգեն նույն ժամանակահատվածում արժեզրկվել է 18,5 տոկոսով:

Անդամ պետություններում ընդհանուր տնտեսական իրավիճակի վատթարացման պայմաններում նվազել է արտահանումը երրորդ երկրներ, իսկ սահմանափակող միջոցների ձեռնարկման արդյունքում ներմուծումը եւս ցուցադրել է նվազում. ապրանքների արտաքին առեւտրի արժեքային ծավալը

2014 թվականին 2013 թվականի համեմատ նվազել է 6,9 տոկոսով, ընդ որում, արտահանումը կրճատվել է 5,3 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 9,6 տոկոսով: Հատուկ անհանգստություն է առաջացնում ապրանքների փոխադարձ առեւտրի արժեքային ծավալի կրճատումը, որը 2014 թվականի արդյունքներով հասել է 11 տոկոսի 2013 թվականի մակարդակի նկատմամբ (առանց հաշվի առնելու տվյալները Հայաստանի Հանրապետության մասով):

Անդամ պետությունների կառավարությունների կողմից մշակվել եւ իրագործվում են միջոցներ, որոնք ուղղված են բացասական հետեւանքների հաղթահարմանը եւ ազգային տնտեսությունների վրա անբարենպաստ արտաքին տնտեսական կոնյուկտուրայի ներգործության մեղմացմանը:

Դրա հետ մեկտեղ անդամ պետությունների տնտեսությունների փոխկապակցվածությունը եւ փոխկախվածությունը պահանջում են դրանց կողմից հակաճգնաժամային միջոցների իրականացման համակարգում, ինչպես նաեւ համատեղ ինտեգրացիոն գործողությունների մշակում եւ ընդունում, որոնք ուղղված են ստեղծված տնտեսական իրավիճակի հաղթահարմանը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված գործիքների օգտագործմամբ:

Հաշվի առնելով, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մակրոտնտեսական քաղաքականության հիմնական կողմնորոշիչները կոչված են լուծելու անդամ պետությունների տնտեսությունների համար առավել կարեւոր կարճաժամկետ եւ միջնաժամկետ խնդիրներ, 2015-2016 թվականների ժամանակահատվածում դրանք ուղղված են լինելու ստեղծված բացասական տնտեսական իրավիճակի հաղթահարմանը՝

մակրոտնտեսական հաստատունության ապահովման՝ գնային կայունությանը հասնելու, անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործման ակտիվացման, բյուջետային համակարգերի

հավասարակշռվածության պահպանման, բանկային համակարգերի կայունության բարձրացման միջոցով.

կայուն զարգացման եւ տնտեսական աճի վերականգնման համար պայմանների ստեղծման՝ տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) (այդ թվում՝ հաշվի առնելով Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործումը), գործարար ակտիվության պահպանման, ֆինանսական միջոցների աղբյուրների ընդլայնման եւ վարկային ռեսուրսների մատչելիության բարձրացման, փոխադարձ առեւտրի ակտիվացման, արտաքին առեւտրի զարգացման եւ իրացման շուկաների բազմազանեցման միջոցով:

I. Մակրոտնտեսական կայունության ապահովում

2014 թվականին եւ 2015 թվականի սկզբին բոլոր անդամ պետությունները բախվել են անբարենպաստ արտաքին տնտեսական գործոնների ապակայունացնող ազդեցությանը ազգային մակրոտնտեսական համակարգերի կայունության վրա:

Էներգակիրների համաշխարհային արդյունահանման ավելացումը եւ քանակական մեղմացման ծրագրի ավարտն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ինչը նպաստում է զարգացող երկրների շուկաներից կապիտալի արտահոսքին, հումքային շուկաներում առաջացրել են գների իջեցում եւ ճնշում են գործադրել անդամ պետությունների ազգային արժույթների փոխարժեքների եւ գնաճի մակարդակի վրա:

2014-2015 թվականներին պահպանվում է Պայմանագրով սահմանված գնաճի մակարդակի սահմանային արժեքի (սպառողական գների ինդեքսը) գերազանցումը Բելառուսի Հանրապետության կողմից, Ռուսաստանի Դաշնությունում դիտվում է գնաճի էական աճ 2013 թվականի համեմատությամբ:

Անկախ պետությունների համագործակցության անդամ պետություններում աճի տեմպերի դանդաղումը, ինչպես նաեւ ակնկալվածից ավելի դանդաղ աճը

Եվրոպական միությունում եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում նպաստել են Միությունում արտադրվող արտադրանքի պահանջարկի իջեցմանը, ինչն անդամ պետությունների հիմնական արտահանման ապրանքների գների իջեցման հետ մեկտեղ մեծացնում է բյուջետային եկամուտները պակաս ստանալու ռիսկը՝ պլանավորված արժեքների հետ համեմատած, եւ պահանջում է անդամ պետությունների բյուջեների եկամտային մասի ավելացման եւ ծախսային մասի օպտիմալացման միջոցների ձեռնարկում:

Միության ամենախոշոր տնտեսությամբ անդամ պետության՝ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ մի շարք երկրների կողմից ձեռնարկված սահմանափակող միջոցները (պատժամիջոցները) ազդեցություն են գործել արտաքին ֆինանսական շուկաների հասանելիության սահմանափակման եւ ներդրումային ակտիվության կրճատման վրա: Միեւնույն ժամանակ այդ միջոցները առեւտրային եւ ֆինանսական ուղիների միջոցով որոշակի չափով բացասական ազդեցություն են գործում այլ անդամ պետությունների ազգային տնտեսությունների վրա:

Տվյալ գործոնները ստեղծում են մակրոտնտեսական ապակայունացման եւ անդամ պետությունների կողմից Պայմանագրով սահմանված մակրոտնտեսական ցուցանիշների քանակական արժեքների գերազանցման ռիսկեր, որոնցով որոշում է տնտեսական զարգացման կայունությունը:

Այդ կապակցությամբ ստեղծված բացասական իրավիճակի հաղթահարման համար անհրաժեշտ է անդամ պետությունների ջանքերի համախմբում՝ կապված համատեղ եւ ազգային առաջնահերթ միջոցների ձեռնարկման հետ (հաշվի առնելով անդամ պետությունների ազգային (կենտրոնական) բանկերի կողմից անկախ դրամավարկային քաղաքականության իրականացումը), որոնք ուղղված են մակրոտնտեսական կայունության ապահովմանը՝ ըստ հետեւյալ առանցքային ուղղությունների:

Գնային կայունության հասնելը, ներառյալ՝

սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների եւ ծառայությունների գների զգալի աճ թույլ չտալը,

անդամ պետությունների տարածքներում մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության եւ մրցակցության ընդհանուր կանոնների խախտումները խափանելը,

բնական մենաշնորհների ծառայությունների սակագների տնտեսապես հիմնավորված կարգավորումը՝ հաշվի առնելով դրանց սպառողների եւ արտադրողների շահերի հավասարակշռության պահպանումը:

Անդամ պետությունների ազգային արժույթների օգտագործման ակտիվացում՝ ներառյալ.

Ավանդների՝ ազգային արժույթներով ձեւավորումը խթանող տնտեսական պայմանների ստեղծումը,

ներքին շուկայում պայմանական միավորներով կամ երրորդ երկրների ազգային արժույթներով գների սահմանման արգելքի սահմանումը,

արժութային իրավահարաբերությունների կարգավորման մոտեցումների համաձայնեցումը,

արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների օգտագործումը ընդլայնելու համար պայմանների ստեղծման հետ կապված աշխատանքի շարունակումը,

անդամ պետությունների ռեզիդենտների միջեւ վճարահաշվարկային հարաբերությունների մեխանիզմի կատարելագործումը,

անդամ պետությունների արժութային օրենսդրության համապատասխան իրականացվող արժութային վերահսկողության բնագավառում գործողությունների համակարգման ուժեղացումը:

Բյուջետային համակարգերի հավասարակշռվածության պահպանում, ներառյալ՝

հարկային համակարգի կատարելագործման եւ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցով անդամ պետությունների բյուջեների եկամտային մասի ավելացումը,

ապօրինի ֆինանսական գործառնությունների հակազդմանն ուղղված միջոցների մշակումը եւ իրականացումը,

զարգացման գերակա ուղղությունների վրա ռեսուրսների կենտրոնացման հաշվին բյուջետային ծախսերի օպտիմալացումը,

միջկառավարական փոխառությունների տրամադրման գործիքների կատարելագործումը,

հակազդումը երրորդ երկրներում գործող ցածր հարկային ռեժիմների օգտագործմանը:

Բանկային համակարգերի կայունության բարձրացում, ներառյալ՝

ազգային արժույթներով իրացվելիության պահպանման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը, այդ թվում կիրառվող գործիքների, ըստ անհրաժեշտության, ընդլայնման միջոցով,

խնդրահարույց ակտիվների կառավարման ինստիտուտների ստեղծման հնարավորության դիտարկումը,

համակարգաստեղծ բանկերի հավելյալ կապիտալացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

ավանդների ապահովագրական ծածկույթի սահմանային գումարների ավելացումը:

Նշված միջոցների ձեռնարկումը կնպաստի մակրոտնտեսական կայունության ապահովմանը, ինչը անդամ պետությունների կայուն տնտեսական աճի հիմքն է:

II. Կայուն զարգացման եւ տնտեսական աճի վերականգնման համար պայմանների ստեղծում

Անդամ պետությունների կայուն տնտեսական զարգացման երկարաժամկետ հեռանկարների համար ռիսկեր պարունակող, ապակայունացնող գործընթացների ակտիվ դրսեւորման պայմաններում կարեւորագույն խնդիր է հանդիսանում տնտեսական աճի ներքին աղբյուրների որոնումը, այդ թվում՝ անդամ պետությունների տնտեսությունների արդյունավետ փոխգործակցության եւ Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործման հաշվին:

Ստեղծված իրավիճակում ծայրաստիճան կարեւոր է դառնում տնտեսության առավել բազմազանեցված մոդելի անցման ուղղությամբ անդամ պետությունների համատեղ ջանքերի ձեռնարկումը՝ տարածաշրջանային համագործակցային շղթաների ձեւավորման եւ ավելացված արժեքի ստեղծման միջազգային շղթաներում ներկառուցման հաշվին մշակող արտադրությունների զարգացման, բարձր ավելացված արժեքով արտադրանքի ներքին արտադրության ծավալների ավելացման միջոցով:

Էժան ֆինանսական միջոցների արտաքին աղբյուրների հասանելիության նվազեցման եւ անդամ պետությունների տնտեսությունների իրական հատվածների ներդրումային գրավչության անբավարարության պայմաններում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության բարելավմանը, գործարար ակտիվության բարձրացմանը եւ երկարաժամկետ ֆինանսավորման ազգային եւ տարածաշրջանային ինստիտուտների զարգացմանը:

Ազգային արժույթների փոխարժեքների գրանցված արժեզրկումը՝ տարբեր արագությամբ, էական ազդեցություն է գործում Միության ներքին շուկայում առեւտրի գնային պայմանների փոփոխման եւ արտադրողների մրցունակության վրա եւ նպաստում է անհամամասնության ուժեղացմանը փոխադարձ առեւտրում:

Տվյալ սահմանափակումների հաղթահարումը եւ փոխադարձ առեւտրի զարգացումը կարող են հզոր խթան հանդիսանալ անդամ պետություններում տնտեսավարող սուբյեկտների փոխգործակցության եւ տնտեսական գործունեության ակտիվացման համար:

Կարճաժամկետ եւ միջնաժամկետ հեռանկարում կարեւորագույն խնդիր է հանդիսանալու նաեւ Միությունում արտադրվող արտադրանքի իրացման շուկաների ընդլայնումը, արդեն կայացած առեւտրային գործընկերների հետ փոխշահավետ տնտեսական հարաբերությունների պահպանումը եւ երրորդ երկրների հետ առեւտրատնտեսական հարաբերությունների ապրանքային եւ աշխարհագրական բազմազանեցման նպաստումը:

Ներկայումս ձեւավորված տնտեսական պայմանները որոշակի քայլեր են պահանջում դրված խնդիրների լուծման ճանապարհին 2015-2016 թվականների ժամանակահատվածում հետեւյալ գործողությունների իրականացման միջոցով՝

Տնտեսության բազմազանեցում (այդ թվում՝ հաշվի առնելով Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործումը), ներառյալ՝

Պայմանագրի իրականացման շրջանակներում Միության ինտեգրացիոն ներուժի օգտագործման գերակա ուղղությունների ընտրության մասով աշխատանքի վարումը,

Միության շրջանակներում արդյունաբերական համագործակցության հիմնական ուղղությունների մշակումը եւ համաձայնեցումը,

նորարարական ակտիվության խթանումը,

համատեղ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման մեխանիզմների մշակումը՝ բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացումը խթանելու նպատակով:

Գործարարական ակտիվության պահպանում, ներառյալ՝

տնտեսության իրական հատվածի եւ ծառայությունների ոլորտի

ձեռնարկությունների հարկային բեռի աճը թույլ չտալու ձգտումը,

փոքր եւ միջին բիզնեսի աջակցության միջոցների իրականացումը,

բիզնես վարելու հարմարավետության միջազգային վարկանիշներում անդամ պետությունների դիրքերի բարելավումն ապահովող միջոցների ձեռնարկումը,

տնտեսավարող սուբյեկտների պետական աջակցության միջոցների ազգային համակարգերի կատարելագործումը լավագույն փորձի եւ անդամ պետությունների՝ զարգացման ազգային ինստիտուտների փոխգործակցության մեխանիզմների ձեւավորման հիման վրա:

Ֆինանսական միջոցների աղբյուրների ընդլայնում եւ վարկային ռեսուրսների մատչելիության բարձրացում, ներառյալ՝

Շրջանառու եւ ներդրումային ռեսուրսներ տնտեսության առավել նշանակալից հատվածներ ներգրավելու հնարավորությունների ստեղծումը,

գերակա նախագծերի համար վարկային միջոցների նպատակային հատկացման մեխանիզմների հետագա զարգացումը եւ դրանք ստացողին արդյունավետ կերպով հասցնելը,

արտադրական ոլորտի ձեռնարկությունների հիմնական կապիտալում մասնավոր ներդրումների աճի համար պայմանների ստեղծումը,

անդամ պետությունների՝ պետական-մասնավոր գործընկերության մեխանիզմների կիրառման ոլորտը կանոնակարգող օրենսդրության կատարելագործումը՝ հաշվի առնելով լավագույն միջազգային փորձը եւ անդամ պետությունների փորձը,

զարգացման տարածաշրջանային ինստիտուտների ֆինանսական հնարավորությունների օգտագործման ակտիվացումը (ԵվրԱզԷՍ-ի հակաճգնաժամային հիմնադրամ, Եվրասիական զարգացման բանկ):

Փոխադարձ առեւտրի ակտիվացում, ներառյալ՝

անդամ պետությունների միջեւ առեւտրային հարաբերությունների զարգացման համար արդյունավետ ֆինանսական մեխանիզմների օգտագործում՝ ներառյալ արտահանման ապահովագրումը եւ վարկավորումը,

տնտեսավարող սուբյեկտների՝ Միության շուկայի փոխադարձ հասանելիության առումով բացառումների եւ սահմանափակումների, այդ թվում՝ խոչընդոտների հայտնաբերման եւ վերացման աշխատանքի շարունակումը,

գյուղատնտեսական արտադրանքի եւ պարենի հիմնական տեսակների մասով անդամ պետությունների պահանջարկի եւ առաջարկի կանխատեսումների նախապատրաստումը,

«զգայուն» գյուղատնտեսական ապրանքների ցանկի ձեւավորման մասով աշխատանքների անցկացումը,

Միության՝ գազի, նավթի, նավթամթերքների եւ էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկաների ձեւավորման մասով աշխատանքի շարունակումը,

Միության գազի, նավթի եւ նավթամթերքների ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռների մշակումը՝ ընդունված մեթոդաբանության հիման վրա:

Արտաքին առեւտրի զարգացում եւ իրացման շուկաների բազմազանեցում, ներառյալ՝

մաքսային կարգավորման ոլորտում վարչական ընթացակարգերի պարզեցումը,

պետական հսկողության ձեւերի արդյունավետությունը բարձրացնելիս արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ պետական ընթացակարգերի տրամադրման ժամանակի, արժեքի եւ քանակի կրճատմանն ուղղված միջոցների իրականացումը,

արտաքին տնտեսական գործունեության կարգավորման համակարգում «մեկ պատուհանի» մեխանիզմի զարգացումը,

երրորդ կողմերի հետ համաշխարհային շուկայում Միության շահերի առաջխաղացմանն ուղղված առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը,

երրորդ կողմերի հետ ազատ առեւտրի ռեժիմ սահմանող պայմանագրերի կնքման ուղղությամբ աշխատանքի իրականացումը,

Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մասին երրորդ կողմերի հետ տեղեկատվական փոխանակման կազմակերպման համար պայմանների ստեղծումը,

լավագույն միջազգային փորձի մակարդակով արտահանման պահպանման, վարկավորման եւ ապահովագրության մեխանիզմների մշակումը,

երրորդ կողմերի շուկաների հասանելիությունը դժվարացնող տեխնիկական խոչընդոտների եւ սահմանափակող միջոցների հայտնաբերումը եւ վերացումը,

էլեկտրոնային եւ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ երրորդ կողմերի հետ առեւտրի զարգացումը խթանելու վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,

տարանցիկ եւ խառը փոխադրումների զարգացումը:

Նշված համալիր միջոցների իրականացումը կնպաստի անդամ պետությունների կողմից բացասական տնտեսական երեւույթների հետեւանքների հաղթահարմանը, անդամ պետությունների տնտեսությունների վերականգնման ապահովմանը եւ դրանց տնտեսական աճի տեմպերի բարձրացմանը՝ տնտեսական ինտեգրման առավելությունների օգտագործմամբ: